№ 130 ՕԳՈՍՏՈՍԻ 2 (14) 1878 ՕԳՈՍՏՈՍԻ 2 (14) № 130

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր համալսարանական երիտասարդութիւնը։ — Ներքին տեսութիւն։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Հայերը և յոյները։ Աւստրիա։ Ֆրանսիա։ Իտալիա։ Արտաքին լուրեր։ — «Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Արևելեան խնդրի լուծումն։

ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

—

Մի ժամանակ մեր հայ երիտասարդների մեծ մասը համալսարանական ուսումը ստանալու համար գնում էին Դորպատ։

Այժմ, որքան մեզ յայտնի է, Դորպատում մի հայ ուսանող կայ միայն։

Մեզ անհասկանալի է թէ ինչ պատճառով հայերը բոլորովին թողել են Դորպատի համալսարանը։ Հայերի մէջ ամեն բան ծայրայեղութիւն է և ամեն բանի մէջ նրանք մոգային են հետևում։ Մի ժամանակ բոլորն էլ գնում էին Դորպատ, իսկ այժմ ոչ ոք չէ կամենում գնալ....

Մինչև որ մեղանում, Անդրկովկասում, չը կայ համալսարան, բոլոր ռուս համալսարաններից Դորպատի համալսարանը շատ կողմերից ամենայարմարն է հայ երիտասարդութեան համար։

Նախ կլիման Դորպատում անհամեմատ լաւ է, քան թէ Մոսկվայում և Ս. Պետերբուրգում։ Իսկ այդ հանգամանքը մեծ նշանակութիւն ունի հայերի պէս հարաւային բնակիչների համար, որոնցից շատերը չեն դիմանում երկու մայրաքաղաքների կլիմային, այնպէս որ հայ ուսանող երիտասարդութեան բաւական մեծ պրոցէնտ մեռնում է Մոսկվայում և Ս. Պետերբուրգում։ Երկրորդ՝ կեանքը Դորպատում անհամեմատ էժան է քան թէ մայրաքաղաքներում, որ նոյնպէս մեծ նշանակութիւն ունի մեր ուսանողների չքաւոր մասի համար։ Յիշենք և այն, որ ուսանողութեան ժամանակ փոքրիկ համալսարանական քաղաքները միշտ աւելի նպաստում են ուսանողի տոկուն պարապմունքներին և աշխատասիրութեանը, քան թէ մեծ կենտրոնները։

Կայ և մի ուրիշ հանգամանք, որի վրա անկարելի է ուշադրութիւն չը դարձնել։

Անհերքելի է, և այդ կը խոստովանի ամբողջ Ռուսաստանը, —որ գերմանական գիտութիւնը բարձր է մեր ռուսաց գիտութենից։ Մեր համալսարանները քաղում են իրանց գիտական նիւթերի մեծ մասը գերմանական համալսարաններից, իրանց երիտասարդ գիտնականներին Գերմանիա են ուղարկում կատարելագործվելու համար։ Ուրեմն գերմանական լեզուն, որպէս գիտութեան պաշարը հաւաքվելու միջոց, գրեթէ անհրաժեշտ է դարձել այժմ իւրաքանչիւր լուսաւորված մարդու համար, որ ազգութեանը և պատկանէր նա։

Ի հարկէ ամեն հայ ուսանող միջոց չունի գնալ Գերմանիա ոչ ուսում առնելու, ոչ էլ կատարելագործվելու համար։ Իսկ Դորպատի համալսարանը միջոց կը տար մեր երիտասարդութեանը հիմնաւորապէս ուսումնասիրել գերմանական լեզուն, որի թէ ընդհանուր կրթողական և թէ բուն գիտական, մասնագիտական դրականութիւնը շատ հարուստ է։

Մի և նոյն ժամանակ Դորպատի համալսարանը ռուսաց համալսարան լինելով, այնտեղ ուսում առնող հայ երիտասարդութիւնը միջոց կունենար նոյնքան հիմնաւոր կերպով ուսումնասիրել և ռուսաց լեզուն, որ անհրաժեշտ է մեզ ամենքիս համար, որպէս պետական լեզու, որքան ուսումնասիրում են այդ լեզուն ռուսաց միւս համալսարաններում ուսում առնող հայ երիտասարդները։

Պէտք է և այն հանգամանքը աչքի առաջն ունենալ, որ Դորպատում ուսում աւարտելուց յետոյ, հայը մի կողմից ռուսաց համալսարանական դիպլոմ է ստանում, օրինակ, Ֆրանսիայում մի ֆրանսիացի և մի հրէայ երկրորդական բան համարելով իրանց փոխադարձ կրօնական դաւանութիւնները, երկուսն էլ ֆրանսիացի են։ Իսկ մահմետականութիւնը չէ թոյլ տալիս մի և նոյն անհատի մէջ որոշել ցեղի և կրօնի այդ զանազանութիւնը։ Ով որ մահմետական՝ նա օտտոման է, ով որ օտտոման է՝ նա անպատճառ մահմետական է։ Այդ պատճառով օտտոմանի անունը, որ սահմանադրութեան միջոցով ուզեցին յատկացնել Բ. Դրան բոլոր հպատակներին, որպէս ներկայացուցիչ և նշան հաւասարութեան մահմետականի և քրիստոնեայի մէջ՝ դառնում է կամ անմտութիւն, կամ խաբեայութիւն։

Ընդունելով մինչև անգամ, որ սահմանադրութիւնը յարգված լինէր և նրան ուզենային անպատճառ իրագործել,—նա կը լինէր կայսրութեան համար դժբաղդութիւնների և խռովութիւնների նոր աղբիւր, ոչ թէ միայն այն պատճառով, որ նա մեծամասնութեան այժը չնորհում է մահմետական տարրին, տալով նրան այսպիսով նոր զարկ բացառական իշխողութեան, բայց և այն պատճառով, որ նա հնարաւոր է կարծում միացնել մի մարմնի մէջ մահմետականներին թիւրքիահպատակ զանազան այլ ազգութիւնների հետ։ Մենք չենք աշխատի հերքել այդ միութեան տեսութիւնը, որ, պէտք է խոստովանած, ոչ մի քրիստոնեայ, բայց մանաւանդ ոչ մի մահմետական երբէք հնարաւոր չէ համարել։ Մենք արդէն պարզ ցոյց տուել ենք որ խլամը չէ կարդ հաշտվել հաւասարութեան հետ, առանց ինքն իրան ոչնչացնելու։ Իսկ միութիւնը առանց հասարակական և քաղաքական հաւասարութեան՝ անհնարին է։

Սուլթան Մահմուդ, պաշտող և հետևող Պետրոս-Մեծի, կարողացաւ ճշմարիտ մի յեղափոխութիւն գործել իր թէ մահմետական և թէ քրիստոնեայ հպատակների հագուստի մէջ։ Բայց զարմանալի է որ այդ սուլթանից հրամայված հագուստը չուտով ստացաւ անշարժութեան բնաւորութիւնը, որ մահմետականը երբէք չի համարձակվի նորից փոխել։ Վերանորոգիչ խալիֆը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

SOLUTION DE LA QUESTION D'ORIENT. —PARIS 1878.—Par un Publiciste d'Orient

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄՆ։— ՓԱՐԻԶ 1878

—

(Շարունակութիւն և վերջ)

Բերենք օրինակներ։ Դուք կամենում էք, դիցուք, կազմակերպել դատարանները, մտցնել դատաստանական մի նոր եղանակ, դարձնել սեփականութիւնը աւելի ազատ և աւելի հաստատուն, կամ վերանորոգել ֆինանսական սիստեմը,—բայց դուք այդ բոլորին անկարող կը լինէք ձեռք տալ, առանց դիպչելու շարիաթի այս կամ այն կանոններին, որոնք նոյնքան սուրբ են, որքան ձեր կրօնական վարդապետութիւնը։

Դուք կամենում էք քաղաքական հաւասարութիւն հրատարակել մահմետականների և քրիստոնեաների մէջ,—բայց դա չի լինի մի հասարակ վերանորոգութիւն, դա կը լինի կատարեալ տապալումն կայսրութեան ամբողջ քաղաքակրօնական համակարգութեան։ Ինչ որ խլամը իրան պարտական է համարում քրիստոնեայի առաջ, որ նրա իշխանութեան է ստորադրված, այդ հաւասարութիւն չէ, այլ միայն նրա անձի և կայքերի վրա, որոնց վայելելը նրան թոյլ է տրվում, հովանաւորութիւնը։ Բայց միայն մահմետականութեան ընդունելը կարող է կատարեալապէս ջնջել մահմետականի և քրիստոնեայի մէջ տարբերութիւնը, բարձրացնել քրիստոնեային մահմետականի մակերևոյթին, համբերողութեանը դէպի այլադաւանները մահմետականութիւնը կարող է հասնել, բայց հաւասարութեանը՝ երբէք։

Վերջապէս դուք կամենում էք մտցնել թիւրքիայում դաւանութիւնների ազատութիւնը։ Ճշդութեամբ ծանօթացէք այդ խնդրին վերաբերեալ արած բոլոր պաշտօնական ազդարարութիւնների հետ,—և դուք կը համոզվէք, թէ միակ զիջումն որ իսլամը կարող է խոստանալ ոչ—մահմետականին այդ է՝ նորան չը խանգարել նորա դաւանութեան գործակատարութեան մէջ, չը նայելով որ շատ բաներում այդ համբերողութիւնը սահմանափակված է. օրինակ մինչև այժմ պետութեան բոլոր նահանգներում զանգակների գործածելը արգելված է քրիստոնեայ եկեղեցիներին։ Բայց մահմետականը, կամ մահմետականուհին եթէ ուզենան իրանց դաւանութիւնը փոխել, մահվան պատժին կենթարկվեն։ Մահմետականը ազատ է պսակվել քրիստոնեայ կնոջ հետ, բայց մահմետական կինը, որ կը պսակվէր քրիստոնեայ մարդու հետ, սարսափելի յանցանք կը գործէր։ Քաղաքացու բոլոր իրաւունքները վայելել, վկայութիւններ տալ դատարաններում կարող է միայն մահմետականը։ Ուրեմն այդ ամենատարրական վերանորոգութիւնը իրագործելու համար, դուք ամեն րոպէ պէտք է խախտէք սրբազան օրէնքի այս անբեկանարելի հրահանգը։ Քրիստոնեայի ստորադրութիւնը միայն այն ժամանակ կանհետանայ, երբ կատարելապէս կը տիրապետէ մահմետական տարրը։

Մեզ մատնացոյց կանեն, գուցէ բազմաթիւ հաղորդների և ֆիրմանների միջոցով արած խոստումները։ Նրանց ճշդութեամբ հետազօտելով կը համոզվենք, որ այդ գրութիւնների բովանդակութիւնը միշտ ճարտարութեամբ յարմարեցրած է եղել մահմետական կրօնի կանոններին, կամ այդ հրովարտակները մնացին զուր խոստումներ։

Իսկ ինչ որ վերաբերում է Միդհաթ-փաշայի սահմանադրութեանը, որ այդքան յարմար ժամանակ հրատարակվեցաւ և առիթ եղաւ Կ. Պոլսի կոնֆերէնցիայում արած առաջարկութիւնների մերժելուն, ինչ արաւ նա և ինչ է խոստանում նա աւելի, քան թէ նախընթաց բոլոր հաղորդները։ Եւ արդեօք այդ սահմանադրութիւնը մի անգամ յարութիւն կառնի այն վերջին հարուածից յետոյ, որ նրան հասցրել է նորա ամենահաւատարիմ կուսակիցներից մինը, Ահմէդ-Վէֆիկ-փաշան, մեր նախկին մեծ-վիզիրը։ Արդէն դրանից կարելի է դատել թէ որքան երազական է այդ սահմանադրութիւնը, որ նրա դէմ գործած բոլոր կամայականութիւնները և նորա հրատարակվելուց յետոյ՝ նորա հեղինակի Միդհաթի, աքսորելը, պատերազմական դրութեան կ. Պոլսի մէջ յայտնելը, պարլամենտի արձակելը նախ քան նա դիմէր բիւդժետի քննութեանը, մայրաքաղաքից տէրութեանը ընդդիմադիր պատգամաւորների հեռացնելը,—այդ բոլորը կատարվեցաւ նոյն իսկ սահմանադրութեան այս կամ այն յօդուածի զօրութեամբ։ Այդ սահմանադրութիւնը արդէն իր հիմքի մէջ սխալ է։ Նա ըստ երևոյթին հաւասարացնում է մահմետականներին պետութեան բոլոր քրիստոնեայ հպատակների հետ, օտտոմանների ընդհանուր անուանակոչութեամբ։ Բայց մի և նոյն ժամանակ մենք գիտենք որ թիւրքաց հիմնարկութիւնների և օրէնքների տեսակէտից օտտոման նշանակում է մահմետական և ուրեմն կատարեալ անմիտ բան է քրիստոնեային օտտոման անուանել, և այդ բառը չատ չատ Օսմանեան պետութեան հպատակ կարող է նշանակել։ Դորանով ինչ է փոխվում։ Որպէս զի այդ անունը տարածվէր Բ. Դրան քրիստոնեայ հպատակների վրա, հարկաւոր կը լինէր որ մահմետականը պահպանելով թիւրքաց պետութեան հպատակի կոչումը, անտես առնէր քաղաքական կեանքի մէջ իր մահմետական լինելու յատկութիւնը։

Եւ միայն այն ժամանակ թէ մահմետականը և թէ քրիստոնեան կը գտնէին մի չէզոք գետին, ազատ կրօնական որ և է բնաւորութենից, որի վրա կանդնելով երկուսն էլ կարող էին միմեանց ձեռք մեկնել օտտոմանների անունով, ինչպէս, օրինակ, Ֆրանսիայում մի ֆրանսիացի և մի հրէայ երկրորդական բան համարելով իրանց փոխադարձ կրօնական դաւանութիւնները, երկուսն էլ ֆրանսիացի են։ Իսկ մահմետականութիւնը չէ թոյլ տալիս մի և նոյն անհատի մէջ որոշել ցեղի և կրօնի այդ զանազանութիւնը։ Ով որ մահմետական՝ նա օտտոման է, ով որ օտտոման է՝ նա անպատճառ մահմետական է։ Այդ պատճառով օտտոմանի անունը, որ սահմանադրութեան միջոցով ուզեցին յատկացնել Բ. Դրան բոլոր հպատակներին, որպէս ներկայացուցիչ և նշան հաւասարութեան մահմետականի և քրիստոնեայի մէջ՝ դառնում է կամ անմտութիւն, կամ խաբեայութիւն։

Ընդունելով մինչև անգամ, որ սահմանադրութիւնը յարգված լինէր և նրան ուզենային անպատճառ իրագործել,—նա կը լինէր կայսրութեան համար դժբաղդութիւնների և խռովութիւնների նոր աղբիւր, ոչ թէ միայն այն պատճառով, որ նա մեծամասնութեան այժը չնորհում է մահմետական տարրին, տալով նրան այսպիսով նոր զարկ բացառական իշխողութեան, բայց և այն պատճառով, որ նա հնարաւոր է կարծում միացնել մի մարմնի մէջ մահմետականներին թիւրքիահպատակ զանազան այլ ազգութիւնների հետ։ Մենք չենք աշխատի հերքել այդ միութեան տեսութիւնը, որ, պէտք է խոստովանած, ոչ մի քրիստոնեայ, բայց մանաւանդ ոչ մի մահմետական երբէք հնարաւոր չէ համարել։ Մենք արդէն պարզ ցոյց տուել ենք որ խլամը չէ կարդ հաշտվել հաւասարութեան հետ, առանց ինքն իրան ոչնչացնելու։ Իսկ միութիւնը առանց հասարակական և քաղաքական հաւասարութեան՝ անհնարին է։

Սուլթան Մահմուդ, պաշտող և հետևող Պետրոս-Մեծի, կարողացաւ ճշմարիտ մի յեղափոխութիւն գործել իր թէ մահմետական և թէ քրիստոնեայ հպատակների հագուստի մէջ։ Բայց զարմանալի է որ այդ սուլթանից հրամայված հագուստը չուտով ստացաւ անշարժութեան բնաւորութիւնը, որ մահմետականը երբէք չի համարձակվի նորից փոխել։ Վերանորոգիչ խալիֆը

նում, ուրեմն ձեռք է բերում այն բոլոր իրաւունքները, որ այդ դիպլոմը տալիս է Ռուսաստանում ուսում աւարտածին, միւս կողմից կատարելապէս տիրապետելով թէ պետական և թէ գերմանական լեզուն,—աւելի հեշտութիւն կունենայ, իր ուսումը աւարտելուց յետոյ, գնալ Գերմանիա՝ իր մասնագիտութեան մէջ կատարելագործվելու նպատակով։

Մէն մի մարդու պարտաւորութիւնն է նախ հիմնաւորապէս իմանալ իր մայրենի լեզուն, ամեն մարդու պարտաւորութիւնն է հիմնաւորապէս իմանալ և պետական լեզուն, բայց և ամեն լուսաւորված մարդու պարտաւորութիւնն է, բացի սորանից, հիմնաւորապէս ուսումնասիրել և ուրիշ եւրոպական գիտական լեզուներից մինը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԿՕՋՕՐԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ եղող հասարակութիւնը երեք հոգաբարձու է ընտրել, որոնք պէտք է հոգան ուսումնարան բաց անել և նուիրատուութիւններ հաւաքել թէ ուսումնարանի համար և թէ եկեղեցու պակաս անօթները գնելու համար։

—

Մեզ հաղորդում են, որ այն ուսուցիչներից մի քանիսը, որոնք խօսք են տուել գնալ ՇՈՒՇԻ այնտեղի դպրոցում պաշտօն կատարելու համար, նորերումս հրաժարվել են և ուսումնարանը թողել են կրիտիկական դրութեան մէջ։

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ հաղորդում են, որ Եղեսիա գիւղի ուսուցիչը ստացել ուսումնարանից փող հայ լրագիրներ բերել տալու համար, բայց ուսումնարանը դեռ ևս չէ ստանում։ Ուսուցիչը արդէն իր պաշտօնից հրաժարվել է։ «Մշակի» խմբագրատանը ոչ ոք չէ գրվել Եղեսիայի ուսումնարանի համար։

—

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ գերմանական Կոլոնիայի ճանապարհին յուլիսի 31-ի գիշերը երեք մարդ, որոնցից մէկը կառապան է եղել, սաստիկ ծեծել են մի կինտօի, որի գլուխը մի քանի տեղ կոտրել են։ Ներկայ գտնվողները օգնութիւն չեն հասցրել ծեծվող կինտօին, իսկ պոլիցիականներ այդտեղ չեն եղել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՅՈՅՆԵՐԸ

—

«Голосъ» լրագրի Թղթակիցը Տրապիզոնից, յուլիսի 19-ին գրում է հետևեալը. «Երէկ, Տրապիզոնով անցան կառավարութեան երեք կոմիսարներ և Ֆէրիկ-Իբրայիմ-փաշան։ Նա նշանակված է Էրզնգանում գտնված զօրքերի առաջնորդ Մուստաֆա-փաշայի տեղ։ Մուստաֆա-փաշան այս օրերս մեռաւ տիֆով Տրապիզոնում։ Ֆէրիկ-Իբրայիմ-փաշան մի անկիրթ և դանդաղ մարդ է։ Նա առաջ Ֆիլիպպօպոլ քաղաքի բերդապետ էր։ Ես ներկայացայ արդէն նրան որպէս «Голосъ» լրագրի Թղթակից։»

—Ah, vous êtes Moukbir? très bien, Monsieur, très bien!

«Այս խօսքերի ժամանակ, նա սկսեց առատաղի վրա նայել, կարծես մի բան յիշելով։ Հարկաւոր է նկատել, որ Թիւրքերը Թղթակիցներին առհասարակ անուանում են մուկբիր՝ լրտեսի նման մի բան—և այսպիսի հասկացողութիւն կազմելով, նրանք ամբողջ պատերազմի ընթացքում խորշում էին և չէին ընդունում թղթակիցներին այնպէս, ինչպէս և բոլոր կասկածելի մարդկերանց և լրտեսներին։

—Je suis militaire. Je ne sais rien de politique, և այլն։

«Միւս կոմիսարները և նրանց թւում Ահմէդ-Շեվֆիկ-բէյ, ծագումով քուրդեր են և շատ պատուելի մարդիկ են։ Նրանց հետ էր և Կ. Պոլսի պարլամենտի նախկին պատգամաւոր Երզնգանից հայազգի Միլիտոս-էֆէնդին։ Նոքա ուղևորվեցան Հայաստան այն է՝ Էրզնգան, Վան, Դիարբեքիր, որպէս թէ քննելու այն չարագործութիւնները, որ կատարել են քուրդերը հայերի դէմ, որպէս հաղորդեց ինձ Մելիտոս-էֆէնդին։ Բայց ես օտար աղբիւրներից իմացայ որ Հայաստան ուղարկված կոմիսարները Բ. Դռնից յանձնարարութիւն ունեն քննել աւելի մօտ հայերի դրութիւնը, նոցա յարաբերական որքանութիւնը, առաջարկած բէֆորմները իրագործելու համար, այն է՝ հասարակաց ժողովներ հիմնելը, հայ-քուրդ միլիցիա հաւաքելը և նահանգապետ ընտրելը։

«Թիւրքաց կառավարչական մարդիկը չեն ծածկում արդէն, որ նրանց համար առաւել օգտաւէտ կը լիներ ինքնավարութիւն ունեցող Հայաստան ստեղծելը, որպէս պաշտպանութիւն Ռուսաստանի «նուաճող պլաններին» դէմ, քան թէ ամեն պատերազմի ժամանակ պատրաստի նիւթ պահել ռուսաց ձեռքին։

«Կոնգրէսը վերջացաւ, խաղաղութիւնը ստորագրված է» լսվում է այս օրերս Տրապիզոնի փողոցներում։ Այս անցքը շփոթեցրեց բոլոր քաղաքի ազգաբնակութիւնը։ Թիւրքերը ազատ շնչեցին, կարելի է ասել, մինչև անգամ ուրախացան, յոյները կատաղած են։ «Մեզ ոչինչ չը տուեցին, մեզ չը վարձատրեցին. Էպիրոսը և Թէսալիան կրկին Թիւրքերին մնաց» լսվում է մի կողմից. գոված Անգլիան մեզ կործանեց. նա մեզ ահագին խոստումներ էր տալի, խորհուրդ տալով խաղաղ մնալ, բայց նրա նպատակը ուրիշ էր, մեզ մի որ և իցէ բան տալու փոխարէն բրիտանական առիւծը կորզեց մեր մարմնից մեր ամենաքաղցր կտորը», ասում են միւսները։ Կիպրոսի հետ արած հնարագործութիւնը գրգռում է ոչ թէ միայն յոյներին, այլ մինչև անգամ հայերին, թէպէտ և ինչ գործ ունեն հայերը Կիպրոսի հետ։

«Այստեղի յոյն ազգաբնակութիւնը վերին աստիճանի գրգռված է. իսկ հայ ազգաբնակութիւնը չէ կարող սառնասիրտ կերպով լսել Անգլիայի անունը։ Նշանաւոր է այն, որ հայ և յոյն ազգաբնակութիւնների մէջ կրօնի և քրիստոնէութեան պաշտպանութեան հարցը Արևելքում վերջին տեղ է բռնել։ Այժմ ոչ ոք չէ մտածում կրօնական հալածանքի վրա։ Վերջին անգրագէտ գիւղական բնակիչը, ներկայ բօպէին մտածում է միայն թէ ինչպէս պաշտպանէ իր ազգութիւնը։ Հայը հարցնում է և հետաքրքրվում է միայն նրանով, թէ ինչ կը լինի հայութեան հետ, ինչպէս վճռեցին կոնգրէսում, հայերին կը տրվի՞ ինքնավարութիւն թէ չէ, և այլն. յոյնը անպատճառ աջ և ձախ գանգատվում է, որ յոյներին կոնգրէսում վերաբերեցին, որ Եպիրոս, Թէսալիա, Մակեդոնիա, Կրիտ և Թրակիա յունաց երկիրներ են, որ իրանց երկիրները բոլգարներին տուեցին, որ նրանց ազգութիւնը հալածանքի մէջ թողին, իսկ բոլգարներին բարձրացրին և այլն և այլն։

«Ահա թէ ինչի համար, այն ժամանակ, երբ նիւթականապէս ճնշված թիւրքերը ուրախ են կոնգրէսի վէճերի խաղաղ վերջանալու վրա, յոյները և հայերը շատ անբաւական են և ուրախ կը լինէին նոր պատերազմ ծագելու համար։

«Ինչպէս տեսնում է՛ք, վերջին ռուս-թիւրքաց պատերազմը Արևելքում մէկ նոր գիծ անցկացրեց քրիստոնեայ ազգաբնակութիւնների մտաւոր և քաղաքական զարգացման կարողացաւ հարկադրել ամբողջ ազգը իր սրբազան կամքին, բայց կրօնական ոգին, թշնամի ամեն նորութեան, յաղթեց այդ վերանորոգութիւնը,—և նոր հագուստը ինչպէս և միւս աւանդութիւնները դարձաւ նոյնպէս մի կրօնական ծէս։ Մահմետական որ այսօր կը թողնէր իր ֆէս և գլխին կը ծածկէր մի ուրիշ գդակ, իր հաւատի առջև կրօնազանց կը համարվէր։

Օսմանեան պետութեան ամբողջ պատկերը կարելի է, ուրեմն, երկու խօսքով նկարագրել։ Մի կողմից կրօնի անունով տիրապետող տարրը, որ անընդունակ է վերանորոգվել, եթէ չը գործի անձնասպանութիւն, ուրեմն անմատչելի որ և է առաջադիմութեան,—իսկ միւս կողմից քրիստոնեայ ազգերը, որոնք խնդրում են կեանք, խնդրում են միջոց տալ իրանց առաջ գնալու, եթէ նրանց հնարաւոր լինէր աղատվել այդ ահագին մարմնի գրկից, որի միջից չունչը և կենդանութիւնը օրից օր սպառնում են անհետանալու։ Բոլգարիայի ապստամբութիւնը և որպէս նորա հետևանքը՝ այդ ապստամբութեան բարբարոս ճնշումը, ոչ ոքին չը պէտք է զարմացնեն։ Նոյն պատճառները կը ծնեցնեն նոյնանման ապստամբութիւններ, որոնց հետևանքը կը լինեն նոյն բարբարոսութիւնները ամեն տեղ, որտեղ քրիստոնեայ տարրը սառրացրած կը լինի օսմանեան տիրապետութեանը, որ բայի բռնի ոյժից չունի ուրիշ միջոցներ կառավարելու և խռովութիւնները խաղաղացնելու։

Թիւրքաց վարչութիւնը պետութեան այն ամեն մասերում որ նրա ձեռքի տակ կը լինեն, բնականապէս կը մնայ միշտ մի և նոյնը, կը մնայ այն, ինչ որ էր մինչև այժմ, եթէ դարձեալ չը վատանայ։

Կ. Պոլսի վերջին կոնֆէրէնցիայից սկսած Թիւրքիայի առանձնացած լինելը, պատերազմը որի շարժառիթը և հետևանքը եղել են քրիստոնեաների թիւրքաց լուծից ազատելը, քրիստոնեայ պետութիւնների լուռ համաձայնութիւնը Ռուսաստանից յանձն առած գործի վերաբերութեամբ, վերջապէս եւրոպական մեծ ընտանիքի հետ մինչև այժմ օտաւսմանների ունեցած կապերի խզելը, նրանց դէպի Ասիա յետ մղելը,—այդ բոլոր հանգամանքները ծնեցրին Թիւրքաց տէրութեան բարձր շրջաններում մի տեսակ ատելութիւն և դառնացած զգայմունք դէպի քրիստոնեաները։ Իսկ այդ դառն և թշնամական զգացմունքը հանգստացնող չէ կարող լինել, ի հարկէ, քրիստոնեաների համար։

Դիպլոմատիայի պարտաւորութիւնը կը լինի, ուրեմն, զբաղվել կոնգրէսում, որ շուտով հաւաքվելու է Բերլինում, ոչ թէ միայն եւրոպական Թիւրքիայի արդէն ազատված ազգութիւնների վիճակով, բայց նոյնպէս կանոնաւորել և այն քրիստոնեայ ազգաբնակութիւնների վիճակը, որոնք ապրում են օսմանեան կայսրութեան միւս մասերում, եթէ արևելեան Եւրոպան չէ ուզում, որ կամ Ռուսաստանը նուաճի այդ երկիրները, կամ Թիւրքաց պետութեան քաղաքական շինութիւնը ինքն իրան յանկարծ կործանվի և թաղվի իր աւերակների տակ։

Այս բօպէիս մենք չենք ճանաչում օսմանեան ոչ մի պետական մարդ, որ յղացած լինէր կայսրութեան վերանորոգութեան և փրկութեան համար մի որ և է ծրագիր։ Տէրութեան ղեկը իրանց ձեռքին ունեցող մարդիկ, կամ նոքա որոնք ձգտում են կառավարչական բարձր պաշտօններին, ենթարկվում են հանգամանքների կատարվող իրողութեանը, առանց յոյս ունենալու տեսնել որ և է բաղդաւոր փոփոխութիւն դրութեան մէջ։ Իսկ որ վերաբերվում է ժողովրդին, նա պատերազմում է երկրի ժամանակագրութեան մէջ դեռ չեղած նիւթական թշուառութեան և չքաւորութեան դէմ, անհամբեր սպասելով թէ ինչ վճիռ կը տայ Եւրոպան իր ապագայ վիճակին։ Այսպիսով՝ խաօսը հասարակական իշխանութեան շրջանի մէջ, անհաստատութիւն և յուսահատութիւն բոլոր ոգիների մէջ,—ահա Կ. Պոլսի դրութիւնը։ Դա մի սարսափելի դրութիւն է, որից այսօր կամ վաղ կարող են ծնվել աղետալի երևոյթներ։ Միայն նահանգները,—այդ հանգամանքը ուշադրութեան արժանի է, յուզված են երեում աւելի բարձր ապագայի յոյսով։ Թէ Սիրիայում և թէ ուրիշ տեղերում, մահմետականները առաջիններն են, որոնք ձայն են բարձրացնում Բ. Դրան կառավարութեան դէմ։ Այդ նահանգները, որոնք մինչև այժմ այդքան հնազանդ էին կենտրոնական կառավարութեան հրամաններին և ուղարկվող պաշտօնեաներին, այժմ իրանք իրանց հարցնում են՝ արդեօք այդ կառավարութիւնը, որին նոքա առանց տրտնջալու նուիրել են իրանց կարողութիւնը և իրանց արիւնը, ինչ օգուտ է բերում նրանց փոխարէն իրանց արած բոլոր զոհաբերութիւնների։ Սուլթանի կառավարութիւնը, որ նրանք մի ժամանակ ընդունում էին առանց հակառակվելու, և առանց նրան որ և է վերահսկողութեան ենթարկելու, երևում է որ կորցրել է այժմ նրանց աչքերում իր առաջվայ հեղինակութիւնը։ Ի՞նչ նպատակով են գալիս նրանց մօտ այդ բոլոր նահանգապետները, որոնք յայտնվում են միմիայն իրանց անասելի ագահութեամբ և վատ կառավարութեամբ։ Այդ նոր գաղափարները, այդ արհամարհանքը դէպի իշխանութիւնը,—բերված են եղել գաւառներում գլխաւորապէս մայրաքաղաքից վերադարձած նահանգական ներկայացուցիչներով։ Այն կառավարութեան տեղ, որին նրանք հեռուից յարգում էին, որ նրանց աչքում կշիռ, նշանակութիւն և հեղինակութիւն ունէր, նոքա Կ. Պոլսի մէջ զրատան միայն անընդունակութիւն, զեղծումներ, չար կամք, ինտրիգաներ և անկարգութիւն։ Նրանց ազգային ժողովը արձակվեցաւ, ցրվեցաւ կատարելապէս, թէև նրանց հաւատացրել են որ ժամանակաւորապէս են արձակում պարլամենտը, պատգամաւորներից նրանք, որոնք իրանց թոյլ տուեցին խօսքի փոքր ինչ ազատութիւն, աքսորվեցան պոլիցիայի ձեռքով։

Ինքնավարութեան բառը սկսում է արդէն հնչել կայսրութեան ասիական նահանգների խորքից։

Դա ժամանակի նշան է, որին անտես առնել չէ կարելի և որ ցոյց է տալիս այն հիմունքները, որոնց վրա այսուհետև պէտք է կայանայ կայսրութեան կազմակերպութիւնը։ Ռուսաստանի արդէն հաստատված գերակշռող ներգործութիւնը արևելքում ներկայացնում է Եւրոպային միայն մի ելք՝ եւրոպական Թիւրքիայում արդէն իրագործված նահանգական ինքնավարութեան սիստեմը գործադրել կայսրութեան բոլոր մնացած մասերում. եթէ ոչ Թիւրքիային վիճակված կը լինի կտոր կտոր ընկնել։ Սպառված և իրան կազմակերպել անընդունակ Թիւրքիային իր սեփական ոյժերին յանձնելով, Եւրոպան պէտք է հաշտվի այն մտքի հետ, որ այդ երկիրը կամ պէտք է ընկնի կատարեալ անիշխանութեան մէջ, կամ պէտք է նուաճված լինի Ռուսաստանի ձեռքով։ Կազմակերպելով երկրի բոլոր կենդանի ոյժերը, ստեղծելով որքան հնարաւոր է միանման տարրերից բաղկացած ինքնավարութիւններ, Եւրոպան կիրագործէր զանազան տեղական ցեղերի ինքնուրոյն խումբերի կազմելը։ Յոյները Եւրոպայում, հայերը և արաբները Ասիայում կը ներկայացնէին նշանաւոր կորիզներ, որոնք ազատվելով Թիւրքաց տիրապետութենից, և գրավելով միացած Եւրոպայի հովանաւորութեան տակ, շուտով կը կազմէին սեփական կեանքով ապրող ընդարձակ կենտրոններ, որոնց նեցուկը կը լինէր ամբողջ Եւրոպան։

Այդ տեսակ ինքնավարութիւնների ստեղծելը, որոնք կախված կը լինէին Կ. Պոլսից միմիայն իրանց կառավարիչների հաստատութիւնը կենտրոնական կառավարութենից ստանալով և նրան տարեկան որոշված տուրք վճարելով, նոր Բոլգարիայի օրինակով, չէր քանդի սուլթանի պետութեան ամբողջութիւնը և կորստաբեր ներգործութիւն չէր ունենայ նոյն իսկ մահմետականների բազմութեան համար։ Սրանք ազատվելով աստիճանաւորների ճնշող և հարստահարող դասակարգից, կը վայելէին, գոնէ նոր կառավարութեան տակ, որքան, իրանց քրիստոնեայ հայրենակիցները, եւրոպական պետութիւնների մէջ մտցրած սկզբունքներին յարմար և առաջադիմութեանը ընդունակ քաղաքական կազմակերպութեան բարիքները։

մէջ։ Կրօնական հարցը հնութիւնների պահարանում դրվեցաւ, առաջ եկաւ բոլոր իր կատարելութեամբ ազգայնութեան հարցը։ Ահա Բերլինի դաշնագրի կարճատևութեան արմատական պատճառը—նա հէնց ազգայնութիւնները անտես արաւ։ Դաշնագիրը, բացի թիւրքերից ոչ ոքին չը բաւականացրեց, որոնք, այնու ամենայնիւ ապագայ չունեն...»

ԱՒՍՏՐԻԱ

Բոսնիայի և Հերցեգովինայի գրաւումը շատ անհանգստացնում է ունգարացիներին։ Սրանք վախենում են որ այդ նահանգները մի օր կը միանան Աւստրօ-Ունգարիայի հետ։ Ունգարիայում քաղաքական բոլոր կուսակցութիւնները միացած են հսկելու համար որ այդ գրաւումը ժամանակաւոր լինի։ Այնու ամենայնիւ, երբ Աւստրօ-Ունգարիան բարեկարգութիւններ մտցնի այդ նահանգներում և ժողովրդի համակրութիւնը ստանայ, կարելի՞ է ենթադրել որ յետ քաշվի այդ տեղերից և նորից յանձնէ Թիւրքաց լծին։ Բայց ունգարացիներն էլ պատճառներ ունեն հակառակվելու համար նահանգների միանալուն։ Որի՞ հետ պէտք է միացնեն Բոսնիան և Հերցեգովինան, Աւստրիայի՞ թէ Ունգարիայի հետ։ Եթէ Աւստրիայի հետ միացնեն, աւստրօ-սլավոնական կուսակցութիւնը կը զօրանայ նոր ոյժերով, կը քանդի Աւստրօ-Ունգարիայի, այդ երկու տէրութիւնների միացած լինելու դրութիւնը և նրա տեղ կը հաստատի դաշնակցական դրութիւնը։ Եթէ Ունգարիայի հետ միացնեն, Բոսնիան Խորվատիայի (Croatie) բաժին կը լինի, կը զօրանայ Խորվատիան և կը խորտակէ վասալականութեան շղթաները որով կապված է ունգարների թագաւորութեան հետ։ Որչափ էլ դժուար կողմեր ունենայ այդ միացումի խնդիրը, այնու ամենայնիւ վաղ թէ ուշ պէտք է իրագործվի։ Հետևապէս, որչափ կարելի է, դիւրաւ լուծելու համար այդ խնդիրը, կառավարութիւնը և զինուորական կուսակցութիւնը որի մէջ տիրում է սլաւօնական տարրը, համաձայնվել են որ Բոսնիայում և Հերցեգովինայում վասալական մի իշխանութիւն լինի Աւստրօ-Ունգարիայի պաշտպանութեան ներքև և այդ նոր իշխանութեան գահի վրա նստի արքիդուքս Ֆրանց-Սալվատոր, Տոսկանայի մեծ դուքսի որդին որ Բոսնիան և Հերցեգովինան գրաւող զօրաբանակի մէջ հեծելազօրքի հրամանատարի պաշտօն ստացած է։ Նրան այդ պաշտօնը տրված ժամանակ խօսվում էր արդէն թէ մի գաղտնի նպատակ կայ այդ բանի մէջ։ Եթէ այդ ծրագիրը գործադրվի, Բոսնիայի ամրոցներում և ստրատեգիական գլխաւոր կէտերում կը մնան աւստրօ-ունգարական պահապան զօրքերը, մինչև որ արքիդուքսը, իբրև հարկատու իշխան, Բոսնիացիներից ազգային մի զօրաբանակ կը կազմի նոքին կարգը պահպանելու և օտարի յարձակումների դէմ սահմանները պաշտպանելու համար։— «Polit. Corresp.» լրագիրը հրատարակել է Աւստրիայի կայսրի պրոկլամացիան որ մի քանի լեզուներով թարգմանված, բաժանել են Բոսնիայի և Հերցեգովինայի բնակիչներին, աւստրիական զօրքերի այդ նահանգները մտած ժամանակ։ Ահա նրա բովանդակութիւնը։

«Աւստրիայի կայսրի, Ունգարիայի թագաւորի զօրքերը անց են կենում սահմանագլխից։ Նրանք գալիս են իբրև բարեկամ, վերջացնելու համար այն չարիքները, որոնք ծանրանում են ոչ միայն Բոսնիայի և Հերցեգովինայի վրա, այլ և Աւստրօ-Ունգարիայի սահմանակից տեղերի վրա։ Պրոկլամացիայի մէջ ասված է թէ կայսրը ցաւելով լսեց այդ նահանգների թշուառութիւնները և որովհետև երկրի կառավարութիւնը անընդունակ է խաղաղութիւնը վերահաստատելու տևողական կերպով, նորին մեծութիւնը չը կարողացաւ երկար ժամանակ անտարբերութեամբ նայել իր երկրին մօտակայ նահանգներում տիրող հարստահարութիւնների և անկարգութիւնների վրա։

«Կայսրը, ասում է պրոկլամացիան, եւրօպական տէրութիւնների ուշադրութիւնը հրաւիրեց ձեր վրա և Բերլինի կոնգրէսը որոշեց Աւստրօ-Ունգարիային յանձնել նորից խաղաղութիւն և բարեկեցութիւն ձեզ տալու պաշտօնը։ Սուլթանը վստահանում է ձեզ իր զօրաւոր բարեկամի պաշտպանութեանը։ Իմ զօրքերս ոչ թէ պատերազմ կը բերեն ձեզ, այլ խաղաղութիւն։ Նրանք ձեզ կը պաշտպանեն, ոչ ոքին չեն հարստահարի։ Այդ երկրի բոլոր բնակիչները հաւասար իրաւունքներ կունենան օրէնքի առջև։ Ձեր սովորութիւնները և դաւանութիւնները կը յարգվեն։ Երկրի եկամուտները կը գործածվեն բացարձակապէս երկրի պահանջների համար։ Անցած տարիներից անվճար մնացած տուրքերը չեն պահանջվի։ Զօրքերը ինչ բանի որ հարկաւորութիւն ունենան, պէտք է որ փող վճարելով ստանան։ Կայսրը և թագաւորը գիտէ ձեր գանգատները և ուզում է ձեր առաջադիմութիւնը. նրա հզօր գաւազանի ներքև համաձայնութեամբ ապրում են զանազան ցեղերին պատկանող և զանազան կրօններ ունեցող ժողովուրդներ. այնտեղ իւրաքանչիւրը խօսում է իր լեզուն, իւրաքանչիւրը քարոզում է ազատօրէն իր հաւատը։ Բոսնիայի և Հերցեգովինայի բնակիչներ, վստահութեամբ եկէք Աւստրօ-Ունգարիայի փառաւոր դրօշակի ներքև։ Ընդունեցէք մեր զօրքերին բարեկամների նման. հնազանդեցէք իշխանութիւններին. նորից սկսեցէք պարապել ձեր գործերով. ձեր աշխատութիւնների պտուղները ապահովված կը լինեն ձեզ համար։»

ՖՐԱՆՍԻԱ

Աջակողմեան լրագիրները հրատարակում են թէ մարշալ Մակ-Մահոն մոռացել է հրաժարական տալ նախագահութեան պաշտօնից, հէնց որ արուեստահանդէսը կը վերջանայ։ Սրա պատճառը, ասում են, նախ այս է որ Մակ-Մահոն կամենում է իր հին բարեկամներին, միապետականներին, նորից սիրելի դառնալ. երկրորդ որ՝ իր յաջորդի ընտրելու ժամանակ ձախակողմեանները զանազան կուսակցութիւնների կը բաժանվեն, ժողովուրդը կը ձանձրանայ և կը դիմէ իրան իբրև փրկիչ և այն կերպով կը կարողանայ վերականգնել միապետութիւնը։ Երևի թէ այդ լրագիրները բոլորովին շփոթված են տեսնելով իրանց յաղթվելը ընտրութիւնների մէջ և սկսել են այդպիսի վիպասանութիւներ հրատարակելով վրդովել պարզամիտներին։

Հանրապետութեան նախագահը ստորագրեց Բերլինի դաշնագրին և յուլիսի 25-ին ուղարկեց Բերլին Ֆրանսիական դեսպանին։ Դաշնագրութեան մասնակցող եօթը տէրութիւններին ուղարկված է եօթը օրինակ դաշնագրից, որոնց վրայ ստորագրելով իւրաքանչիւր տէրութեան վեհապետը և գլխաւոր մինիստրները, փոխանակում են իրար հետ իրանց դեսպանի միջոցով Բերլինում։

Հիւսիսային քարածուխի հանքերում աշխատող մշակները գործադուլ են արել և պահանջում են իրանց վարձը աւելացնել։ Կառավարութիւնը միջոցներ ձեռք արած է յուզմունքը արգելելու համար։ Մշակները բաժանված են երկու կուսակցութիւնների. մի քանիսը ուզում են յամառութեամբ շարունակել իրանց գործադուլը, մի քանիսն էլ յանձնառու են լինում աշխատելու։ Առաջինները, մի քանի տեղերում, զաւազաններով յարձակվել են աշխատել ուզեցող մշակների վրա։ Զօրքերը միջամտել են այդ կռիւներին և կալանաւորել են մշակներից մի քանիսին։

Փարիզն արուեստահանդիսում կը հաւաքվի մի կոնգրէս, կոյրերի դրութիւնը լաւացնելու նպատակով։ Այդ կոնգրէսը կը սկսվի առաջիկայ սեպտեմբերի 23-ին և կը տևէ մինչև 30։ Կոյրերի ուսուցիչներ, դաստիարակներ, բժիշկներ և նրանց վերաբերեալ խնդիրներով հետաքրքրվող գիտնական անձեր աշխարհի զանազան կողմերից հրաւիրված են այդ կոնգրէսին ուր պիտի քննվի կոյրերի ֆիզիկական, բարոյական և մտաւորական դրութիւնը լաւացնելու մեթոդների վրա։

ԻՏԱԼԻԱ

Տրիէստը և Տրէնտը Իտալիայի հետ միացնելու համար եղած ժողովրդական ցոյցերը օրից օր կորցնում են իրանց ազդեցութիւնը։ Ժողովրդի մեծամասնութիւնը չէ համակրում այդ ցոյցերին։ Իտալական կառավարութիւնը իր խոհեմ վարմունքով կարողացաւ չափաւորել ժողովրդի եռանդը։ Գարիբալդին իր որդու բերանով յայտարարեց թէ ինքը մասնակից չէ իր անունով սկսված կամաւոր զինուորագրութեան որ բացարձակապէս անպատեհ է համարում։ Երևի թէ եւրօպական մեծ տէրութիւններն էլ բոլորովին վստահ են և երկիւղ չունեն այդ ժողովրդական ցոյցերից, որովհետև իրանց դեսպանները այս բօպէիս Հռոմից բացակայ են գտնվում։

Իտալական մինիստրութիւնը մի նոր օրէնքի ծրագիր է պատրաստել քաղաքային ամուսնութեան վերաբերութեամբ։ Այդ ծրագիրը որ մօտ օրերում կը ներկայացվի իտալական պարլամենտին, եկեղեցականներին արգելում է ամուսնութեան կրօնական արարողութիւնները կատարել, եթէ այդ ամուսնութիւնը քաղաքականապէս վաւերացված չէ լինի օրէնքի համեմատ։ Այդ օրէնքին հակառակ վարվող եկեղեցականները 200-ից մինչև 1000 ֆրանկ տուգանքի կը դատապարտվեն և մէկ ամսից մինչև երեք ամիս կը բանտարկվեն։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզից յուլիսի 27-ին գրում են «Indépendance Belge» լրագրին թէ Նուբար-փաշան պատրաստվում է վերադառնալ Եգիպտոս։ Խէդիվը հրաւիրել է նրան, նորից պաշտօն տալու համար։ Այնու ամենայնիւ Նուբար փաշան, Խէդիվի նախկին սիրելին, այս անգամ առաջ քան թէ գործի միջամտելը, ուզում է գնալ Եգիպտոս և մօտից քննել մարդիկը և գործերի դրութիւնը։ Նամակագիրը աւելացնում է որ Նուբար-փաշայի փորձառութիւնը և կառավարական գործերի մէջ ունեցած աջողակութիւնը ամենքին յայտնի լինելով, Եգիպտոսի պարտատէրերը շատ ուրախ կը լինեն երբ տեսնեն նրա պաշտօն ստանալը և այդ բանը մի նոր ապահովութիւն կը համարեն բարեկարգութիւնների գործադրվելուն։

—Կիպրոս կղզուց հաղորդում են որ ամեն ապրանքների գները սաստիկ թանգացել են։ Այն տները որ սկզբից 15 ստերլինգ ոսկով վարձու էին տալիս, այժմ չէ կարելի 250 ոսկուց պակասով վարձել։ Մի անյարմարութիւն էլ այս է որ հիւրանոց չը կայ կղզում։

—«Standard» լրագրի մասնաւոր թղթակիցը գրում է Կիպրոս կղզուց թէ այդ երկիրը շատ բարեբեր է, բայց մինչև այժմ բոլորովին անխնամ են թողել։ Գրեթէ բոլոր քաղաքները աւերակ դառած են։ Յուլիսի 26-ին դեռ սուլթանի զօրքերը մնում էին կղզում, բայց բրիտանական դրօշակը ծածանում էր ամեն տեղ։ Մինչև այժմ բնակիչները իրանց անտարբեր են ցոյց տալիս եղած փոփոխութեան, բայց գաղթականները մեծ ոգևորութեամբ գալիս են զանազան կողմից, մանաւանդ Յունաստանից, Զմիւռնայից և Գերմանիայից։ Ջուրը լաւ է և առատ. գրեթէ ամեն տեղ 18 ոտնաչափ խորութեամբ ջուր է գտնվում։ Այս բօպէիս սաստիկ չոր է լինում։ Զօրքերի վրանները քիչ են և չեն բաւականանում։ Կղզին շատ վատ կերպով կառավարված է։ Փոստի երթևեկութիւնը կատարելապէս անկանոն է և տեղական փոստ չը կայ։ Անգլիացիները այստեղ հաստատվելու համար, սկզբից բաւական նեղութիւն կը կրեն կլիմայի պատճառով։

—Բուխարէստից յուլիսի 30-ին հաղորդում են հետևեալը։ «Ռուսները պատրաստվում են Բեսարաբիան գրաւելու։ «Telegraphe» լրագիրը խորհուրդ է տալիս տեղական իշխանութեան որ բողոքէ։ Դօբրուջան սկսած են մաքրել։ Զօրաբանակը վերադառնում է Բուխարէստ։»

—Կ. Պոլսից յուլիսի 20-ին մեզ գրված մի նամակից քաղում ենք հետևեալը։ «Ազգային խնդիրը անորոշ վիճակի մէջ է. դեռ յոյսեր կան և վստահացնում են որ հոկտեմբեր ամսում հաւաքվելու աւագաժողովի մէջ վերջնական որոշումներ պէտք է լինեն և այդ ժամանակ հայերի խնդիրն էլ աւելի ազդու և գործնական կերպով կը վճռվի։»

—Լրագիրներին հեռագրում են, որ ռուսները հրաւիրեցին Բօդոպեան ապստամբներին մաքրել 10 օրվայ ընթացքում Արևելեան Ռումելիա, հակառակ դէպքում նրանց վրա կը յարձակվեն։ Կ. Պոլսում գտնված ապստամբների երկու առաջնորդներ յայտնեցին անգլիական դեսպանին, որ ապստամբները կընդդիմանան և բոլոր պատասխանատուութիւնը թողնում են ռուսների վրա։

—«Standard» լրագիրը հաղորդում է, որ պարլամենտը այս տարի արձակվելու չէ։ Լրագիրը այս լուրը ստացել է կիսապաշտօնական աղբիւրներից։

—Հռոմից լրագիրներին հեռագրում են, որ այնտեղի քաղաքական շրջաններում լուր կայ, իբր թէ Բ. Դուռը ուղարկել է պետութիւններին մի շրջաբերական, որտեղ բացատրվում են այն չարժառիթները, որոնք ստիպեցին Բ. Դրանը կապել յունիսի 4-ի դաշնագրութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԺԷՊՅԷ, 27 յուլիսի (8 օգոստոսի)։ Երէկ 6-դ զօրաբաժնի երկու բրիգադներ լեռնային ճանապարհով Մօգլայից ուղևորվեցան դէպի Ժէպյէ։ Վեց հազար թշնամիներ չորս թընդանօթներով յետ են մղված երկու ամրացած դիրքերից։ Աւստրիական 27-դ բատալիօնը յամառ կռւից յետոյ ստիպեց կանոնաւոր նիզամի բատալիօնին եօթը օֆիցերներով զինաթափ լինել և վերցրեց չորս սայլ պատերազմական գործիքներ։ Աւստրիացիներից սպանվածների և վիրաւորվածների թիւը 58 է։ Սպանված է գնդապետի օգնական Կուբան։

ՎԻԵՆՆԱ, 27 յուլիսի (8 օգոստոսի։ Երէկ Ժէպյէի մօտ սկսվեց պատերազմ բոլոր գծի վրա։ Թշնամին դուրս է գցած առաջին դիրքից Վէլէի-Պլանինա սարի հիւսիսային զառիվայրի մօտ։ Երեք ու կէս ժամվայ ընթացքում ուժով վեր է առնված բլոկհաուզ։ Այդ ժամանակ գերի ընկաւ կանոնաւոր բէդիֆի մի բատալիօն։ Ժամի 7-ին վեր առան Ժէպյէ։ Մահմեդական ազգաբնակութիւնը ցիր ու ցան եղաւ։ 700 մարդ գերի են առած։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 օգոստոսի Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ր. 75 կ., երկրորդ 96³/₈ ր., երրորդ 96 ր. 25 կ., չորրորդ 95 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 235 ր. 25 կ., երկրորդ 235 ր. 50 կ., արևելեան 95 ր. 75 կ., ոսկի 7 ր. 73 կ.։ Տրամադրութիւնը թոյլ է։ Դիսկօնտ Բօրսայի վրա 4%։

ՕԴԷՍԱ, 31 յուլիսի (12 օգոստոսի)։ «Սուլթան» անունով շոգենաւի վրա, որ ուղևորվում էր դէպի Նիկոլաէվ, որպէս զի ներկայ գտնվի նաւահանդիսին որ անելու էր Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաեվիչ, յանկարծ ճայթվեցաւ շոգեմեքենան։ Այդ ճայթումից սպանվեցան յայտնի Բօժէսավենսկիյ, 3 մեքենապետներ և 2 ունտերօֆիցերներ։

ՎԻԵՆՆԱ, 31 յուլիսի (12 օգոստոսի)։ Ժէնցէից փախած ապստամբները, ջարդվելուց յետոյ, ամրացան Սարաեվոյի մէջ։ Ժէնցէի մօտ եղած ճակատամարտի ժամանակ սպանվեցաւ մի աւստրիական օֆիցէր, վիրաւորվեցան 6 օֆիցէրներ, 140 սոլդատներ և սոլդատներից շատերը սպանվեցան։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինձ յանձնված լինելով ՍՊՈՒԼԻՍԻ ԵՐԿԱԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ վարձել, խնդրում եմ ցանկացողներին պայմանների մասին խօսելու դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատունը. իսկ օտարաքաղաքացիք կարող են իրանց ցանկութիւնը յայտնել նամակով: Ընյարմար համարվածներին չի պատասխանվի:

Ց. Մէլիք-Յակոբեանց

Օգոստոսի կէսից լոյս կը տեսնեն Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ հետևեալ նոր աշխատասիրութիւնները՝

1) ԸՆԹԵՐՑԱՐԱՆ հայերէն լեզուի «ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ, երրորդ տարվայ ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ» անունով.

2) «ՀԱՄԱՌՕՏ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ»

Ցանկացողները սահմանալ յիշեալ գրքերը իր ժամանակին կարող են դիմել «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ» կամ Զաք. Գրիգորեանի գրավաճառանոցը: 2—3

ԾԱԽՎՈՒՄ Է ԳՕՏՕՎԱԼՆԻԱ: 40% զեղչումն կը լինի խանութների գնից: Կօջօրսկայա փողոց, տուն № 13, Տէր-Բարսեղեանց:

Պերճ Պրօշեանցը յայտնում է իր «ԿՈՒԱԾԱԴԻԿ» վիպասանութեան յարգոյ բաժանորդներին, որ գիրքը դուրս կը գայ մինչև օգոստոսի վերջը և այն ժամանակը ամեն ոք կը ստանայ իր համարը:

«ՃՈՐՏՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» Գուստավ Քալանթարեանցինը, ռուսերէն լեզուով, ծախվում է Բերլինշտամի գրավաճառանոցում, Թիֆլիսում, Գօլովինսկի պրոսպէկտի վրա: Գինն է 75 կոպ. փոստի ծախսով 80 կոպէկ: 1—6

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են ՍՊԻՏԱԿ ԲՈՒՄԱՋԷՅՍ զինուորականների չօրերի համար արշինը 1 ր. և բարձր, ՈՒԻՆՍԻ չօրերի համար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 կ., ՓՕՇԻՆԵՐ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ և ԹԻՆԱՑԻ ԲԱԼԶԱՄԵՆ (իւղ) 1½ ր., ՍԱՊՕՆ 10 կ. և բարձր, ՅԻՏՐԱԴ մագնեցի 1½ ր., ԲԻՍԿՎԻՏՆԵՐ 1 ր., և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., երկաթեայ մահճակալներ 5 ր. և բարձր, սղոցներ 50 կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ դիւժինը 3 ր., ԳՐԻՉՆԵՐ արզը 15 կ. և բարձր, ԲԼՎՕԼՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոպէկ, արական ԹԱՄԲԵՐ 40 ր. և բարձր. ԻԳԱԿԱՆՆԵՐ 70 ր. և բարձր, ծածկոցներ, մակենատօչներ, երեխաների չօրեր 4 ր. և բարձր, հիանալի վերարկուներ 12 ր. և աւելի, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պօղնօսներ 10 կ. և բարձր, րօմ, կոնեակ, պօրտ-վէյն, խերես և անգլիական օղի 1½ ր., ՊԱՆԻՐ չեստեր 60 կ. և բարձր: Շուտով կը լինի լաւ թէյ 1 ր. ֆունտը:

19—20

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԵՈՒՄ)

Վաճառվել սկսան հետևեալ նոր տպագրութիւնները՝

1. Նախակրթանք հայերէն գրաբար լեզուի, աշխատ. Գ. Արք. Այվազեան, հինգերորդ տիպ, ճոխազոյն քան առաջինները: Գիրքը նշանակված է իբրև սկզբնական ձեռնարկ գրաբար լեզուն սկսողների համար մեր ազգային ուսումնարաններում: Գինն է 40 կոպէկ. գումարով գնողներին զիջումն կը լինի:

2. Աղաս երգեր, բանաստեղծութիւնք Գամառ-Քաթիպայի, տպագրութիւն «Փարձ» եռամսեայ հանդիսի.—Սա մի փոքրիկ տետրակ է բաղկացած ընդամենը 8 հատ բանաստեղծութիւններից, որոնց մէջ հոչակաւոր բանաստեղծը եռանդուն խօսքերով յայտնում է ճնչուած հայերի հոգեկան մրմունջները և նոցա բողոքը դէպի իրանց կառավարողները, առաջնորդներն ու հարուստները. բողոքում է դէպի Եւրօպան, որ տարբերում է հայերին սլաւներից: Ամեն մի բանասէր հայի բարոյական պարտաւորութիւնն է տարածել այս տետրակը ժողովրդի մէջ մեր հայաբնակ քաղաքներում: Գինն է 5 կոպէկ: Օտար քաղաքներից գումարով պահանջողներին զիջումն կը լինի: Ծախվում է բացառապէս կենտրօնական գրավաճառանոցում:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. ԵՒՏՈՒՇԵՎՍԿԻ.—Ժողովածու թուաբանական խնդիրների յարմարեցրած հայ ուսումնարանների համար I մասն—ամբողջ թիւեր, 3-դ տպագրութիւն հիմնական փոփոխութիւններով և յաւելմունքներով. փոխադրութիւն Մարտ. Սիմէոնեանց: 1878 թ. գինն է հատով առնողների համար 50 կ. գումարով—45 կ.:

2. ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ առաջին տարի—գրել և կարդալ աշխատասիրութիւն Ղ. Աղայեանցի, գինն է 15 կ.:

3. ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ծնողաց և ուսուցիչների համար—Ղազար. Աղայեանցի. գինն է 20 կ.:

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԵՈՒՄ

ՀԱՏ ԷԺԻՇՆ ԳՆԵՐՈՎ, ՎԱՐՁՈՎ, ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԼԻՈՒՑ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱԲՈՒԱՐՋԱՆԻ ԿՈՒՐՍԷՈՒ ԳԻԻՂՄԻՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՄԻՆ, ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ, ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ:

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԵԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԵՒԵՐԻՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից:

ՕԳՈՍՏՈՍԻ 2. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Օգոստոսի 1-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլումպերիալը)	7	95
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1275	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տում. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիչնի »	235	—
Մարսելի կուրսը 267—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	9	32
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	101	—
Շաքարը բրօցկու . .	7	50
„ միւս տեսակը.	7	40
„ չաքարաւազը .	5	80
„ տրանզիտը. .	5	85
„ մաքսը վճարած	11	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուչի . . .	8	—
„ թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	40
„ Երևանի. . . .	—	—
Գարին.	1	—
Մոմը բնաճարպի (стеар.)	12	80
Մետաքս Նուխվայ . .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լաստը) Ագուլեաց	45	—
Կոֆէն մօկօի. . . .	25	50
„ լիվանի . . .	23	50
„ մարտինկօյինը	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ. կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական.

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան. Բժշկապետ Ա. անով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան. Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ.

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փօթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլովո. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

	երեկոյեան
Փօթիից . .	1 37
Ռիօն . . .	4 8
Միխայլովո. .	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան.

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր, Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը: Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիսի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ:

Երկուշաբթի. Վէրմիշեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ:

Երեքշաբթի. Վէրմիշեվ ներքին հ. Էյլիս աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան.

Չորեքշաբթի. Վէրմիշեվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային:

Հինգշաբթի. Վէրմիշեվ ներքին հ. Գավրօնսկից կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակստ վեներական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր:

Ուրբաթ. Վէրմիշեվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշեվ ներքին հ. Էյլիս աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հիւանդութիւններ:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԹԻՖԼԻՍ. Գ. Ք. Տ. Ստացանք 30 ռուբլ բաժանորդագներ:

—ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍ. Գողթնեցի. Մենք յարմար գտանք այդ փոփոխութիւնը անել:

—ԷՐԶՐՈՒՄ. Գ. Ն. Ստացանք նամակը, կը տպենք հետևեալ համարում:

—ՄՕՍԿՎԱ. Ս. Դ. Ստացանք նամակը, կը տպենք հետևեալ համարում: Հասցէն կը փոխենք:

—ԱՍՏԱԽԱՆ. *** Նամակը ստացանք. տպագրութեան մասին դեռ ոչինչ չենք կարող ասել:

—ԵՐԵՒԱՆ. Շ. Ուղարկեցէք յիշողութիւնները Պարսկաստանի կեանքի մասին: Մանրամասները երևի բաւական հետաքրքիր են:

Дозволено Цензурою 1 Августа 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ